ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/1» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան

02.04. 2019թ.
ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության գլխավոր քարտուղարի ժ/պ՝ Հ. Գևորգյան

Անդամներ՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության պետ՝ Ա. Հովհաննիսյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութատեխնիկական ապահովման և գնումների բաժնի պետի ժ/պ՝ Ա. Շաբոյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ՝ Լ. Միքայելյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետ՝ Հ. Շեկոյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

1. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված կարգով ստացվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման եզրակացությունը, համաձայն որի՝

1.1.1 «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

1.1.2 «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գերազանցում է սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

1.2 Հրավերով սահմանված ժամկետում «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

Հանձնաժողովը որոշեց.

2.1. Ընտրված մասնակից ճանաչել՝

-«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին /համատեղ գործունեություն/

2.2 Մասնակցի հետ կնքել պայմանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Հ.Գևորգյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Ա.Հովհաննիսյան	ԳՊ/ԳԱ
	Ա.Շաբոյան	ԳՊ/ԳԱ
	Լ.Միքայելյան	ԳՊ/ԲԱ
	Հ.Շեկոյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Լ.Ադոնց	ԳՊ/ՄՀմ